Ստեփանակերտի քաղաքային համայնքի 2016 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա խնդիրները

1. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցման և բակերի բարեկարգման աշխատանքների իրականացում (հաշվառված են 134 բազմաբնակարան շենքերի տանիքներ, որոնցից 54-ը առաջնահերթ վերակառուցման կարիք ունեն: Առաջնահերթ բարեկարգման են ենթակա նաև 20 բազմաբնակարան շենքերի բակեր): Ճշտգրտված ցուցակները ներկայացված են ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն:

2. Քաղաքի ջրահեռացման /կոյուղաջրերի և անձրևաջրերի/ ամբողջական ցանցի ստեղծման և վերակառուցման աշխատանքների իրականացում:

3. Քաղաքի նոր գլխավոր հատակագծի հաստատմանն ուղղված աշխատանքների իրականացում (քարտեզագրում): Ստեփանակերտ քաղաքի գոտիավորման և առաջնահերթ շինարարության տեղաբաշխման նախագծի հաստատում (շարունակվում են «Հայնախագիծ» ՓԲԸ-ի հետ համատեղ աշխատանքները):

4. Քաղաքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայություններն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է՝

1) վերանայել բնակչության ջրամատակարարման և ջրահեռացման, բազմաբնակարան շենքերի սպասարկման, ինչպես նաև աղբահանման բնագավառում գործող սակագները, որոնք չեն համապատասխանում կազմակերպությունների կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարված վարձավճարներին

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	*գործող*	*հաշվարկված*
- ջրամատակարարման և ջրահեռացման վճար (1 խոր.մ. դիմաց)	*112 դրամ*	*186 դրամ*
- բազմաբնակարան շենքերի սպասարկման վճար (1 ք.մ. դիմաց)	*12 դրամ*	*20 դրամ*
- աղբահանության ծառայության վճար (1 շնչի դիմաց)	*120 դրամ*	*182 դրամ*

2) ընկերությունները համալրել նոր տեխնիկայով և անհրաժեշտ գույքով

2.1.«Սանմաքրում» ՀՈԱԿ

- SISU մակնիշի բազմաֆունկցիոնալ (ինքնաթափ, ձնահավաք և ջրցան) մեքենայի հիմնանորոգում (վերանորոգման համար պահանջվում է՝ 5.0 մլն դրամ),

- արտակարգ իրավիճակներում աշխատանքները վերահսկելու նպատակով՝ ծառայողական մեքենայի ձեռքբերում (ամենագնաց ԿԱԶ 2121 “ՆԻՎԱ” մակնիշի ավտոմեքենա՝ հին 1997թ. ԳԱԶ 3110 մակնիշի ավտոմեքենայի փոխարեն),

- աղբահավաք և ձնահավաք-աղցան մեքենաների ձեռքբերում,

-բազմաբնակարան շենքերի բակերից և քաղաքի մայթերից ձյան մաքրման աշխատանքներն իրականացնող մինի տրակտորների ձեռքբերում (գնացուցակը կցվում է).

2.2. «Ակադեմիկոս Թախթաջյանի անվան Ստեփանակերտի բուսաբանական այգի» ՓԲԸ՝

- տնկարանում ընկերությանը պատկանող վարչական շենքի հիմնանորոգում,

- ջրցան և բեռնատար մեքենաների ձեռքբերում,

2.3.«Ձրմուղ-կոյուղի» ՓԲԸ՝

-Ստեփանակերտում շուրջօրյա ջրամատակարարման ծրագիրը իրականացնելուց հետո ջրամատակարարման համակարգը փաստացի շահագործվում է ընկերության կողմից, սակայն աշխատանքների իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի բացակայության պատճառով արտացոլված չէ ընկերության հաշվեկշռում և կանոնադրական կապիտալում, ինչի հետևանքով ընկերությունը հնարավորություն չունի իրականացնել համակարգի լիարժեք շահագործումը.

- ավտոտնտեսության թարմացում (ասենիզացիոն մեքենա, կոյուղագծերի վթարավերացման հատուկ մեքենա, ջրագծերի վթարավերացման հատուկ մեքենա, մինչև 3տ մինի մանիպուլյատոր, ջրաբախշիչ հորերի սպասարկման հատուկ մեքենա),

-«Մեղրագետի» պոմպակայանից մինչև ջրառ՝ ինքնահոս ջրագծի կառուցում,

- շուրջօրյա ջրամատակարարման ծրագրի ավարտում (Աջափնյակ և Կրկժան թաղամասերի ջրագծերի կառուցում և շուրջօրյա ջրացանցի հետ միացում),

- թիվ 2 զտիչ կայանի զտիչների վերակառուցում (գործում է ինքնաշեն վթարային տարբերակը),

- ջրամատակարարման նոր ցանցի արդյունավետ սպասարկման համար ժամանակակից տեխնիկական միջոցների ձեռքբերում (վթարի տեղորոշման սարք, կոյուղագծերի խցանումների բնորոշման և տեղորոշման սարք),

- ջրառների և ՕԿՁ-ների՝ զինված պահակախմբի ապահովում.

2.4.«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ՝

- ինքնաթափ մեքենայի ձեռքբերում:

5. Ծայրամասային փողոցների բարեկարգման /խճապատման/ աշխատանքների իրականացում.

6. Ստեփանակեր քաղաքում բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում և վերակառուցում.

7. Ստեփանակերտ քաղաքում ջեռուցման ժամանակաշրջանի երկարաձգում՝ ժամկետը՝ 120 օրից դարձնելով 150 օր.

8. Քաղաքային նոր գերեզմանատան տարածքի ցանկապատում և բարեկարգման աշխատանքների իրականացում.

9. Մայրաքաղաքի հեռանկարային զարգացման համատեքստում՝ Արեշ, Աջափնյակ և 38-րդ թաղամասերում կառուցապատումը բնականոն կերպով շարունակելու նպատակով այդ թաղամասերի անհրաժեշտ ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում-ջրահեռացում, գազ, էլեկտրոէներգիա) համալրում.

10. Ստեփանակերտի հեռանկարային զարգացման նպատակով 2009 թվականին Ասկերանի շրջանի Խնածախ համայնքից Ստեփանակերտի համայնքին է հատկացվել 174.0 հա հողատարածք: Սակայն առ այսօր լուծված չէ Խնածախի համայնքի և առանձին սեփականատերերի փոխհատուցման հարցը (ընդհանուր գումարը կազմում է՝ 155.0 մլն դրամ), ինչի պատճառով հնարավոր չէ իրագործել նշված տարածքի հետագա կառուցապատման և շահագործման ծրագիրը.

11. Հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավում (առաջնահերթորեն՝ N 10 հիմնական դպրոցի հիմնարար նորոգում, Աջափնյակի N 12 դպրոցի մասնաշենքի չօգտագործվող մասի վերակառուցում մանկապարտեզի համար, տանիքի վերանորոգում, ինչպես նաև մարզադահլիճի կահավորում).

12. Հրետակոծությունից տուժած ու զոհված ազատամարտիկների ընտանիքների անհատական տների և բնակարանների վերանորոգման աշխատանքների իրականացում (ճշտգրտված ցուցակները ներկայացված են ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն).

13. Հրետակոծությունից լրիվ ավերված անհատական տների վերականգնման կամ փոխհատուցման աշխատանքների իրականացում (թվով 18 տուն, որոնց ցանկը ներկայացված է ԼՂՀ կառավարություն).

14. Ն.Ստեփանյանի անվան պուրակի շատրվանների հիմնանորոգում և զուգարանների կառուցում (47.0 մլն դրամ).

15. Առաջնահերթ մի շարք իրավական ակտերի ընդունում (ներկայացված է ԼՂՀ կառավարություն): Մասնավորապես՝

- արտոնյալ բնակհաշվառման հերթացուցակներում քաղաքացիներին ընդգրկելու և բավարարելու վերաբերյալ գործող օրենսդրական դաշտը կարգավորող ԼՂՀ ՊՊԿ 1993թ. դեկտեմբերի 9-ի «ԼՂՀ-ում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող

քաղաքացիների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգի մասին» N 344 որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարում.

- աղբահանության և սանիտարական մաքրման հետ հարաբերությունների կարգավորումը սահմանելու վերաբերյալ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ԼՂՀ օրենքի ընդունում.

- հարկային վարչարարության բարելավման և համայնքային բյուջետավարման գործընթացների հստակեցումն սահմանելու մասով՝ «Հարկերի մասին», «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ԼՂՀ օրենքներում լրացումների և փոփոխությունների ընդունում.

- համայնքում սոցիալապես անապահով և անվճարունակ բնակիչներին օժանդակելու նպատակով՝ «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություն սահմանելու կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման ընդունում .

-Ստեփանակերտի համայնքի սեփական եկամուտների համալրման նոր աղբյուր ստեղծելու նպատակով՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ԼՂՀ օրենքում կատարել լրացում: